Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

02 06 2022թ. ք.Սևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Գեղարքունիքի և Տավուշի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր Գայանե Թովմասյանս, ուսումնասիրելով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Գեղարքունիքի և Տավուշի մարզային բաժնում 19.11.2021թ.-ին հարուցված թիվ 08337264 կատարողական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ԳԴ4/0124/02/21 կատարողական թերթի համաձայն պետք է Իշխանուհի Գագիկի Թադևոսյանից համապարտության կարգով հօգուտ «Արեգակ ՈւՎԿ» ՓԲԸ-ի բռնագանձել 2424233 ՀՀ դրամ գումար և հաշվեգրվող տոկոսներ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 66 և 67 հոդվածների համաձայն պարտապանից հօգուտ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության պետք է բռնագանձել բռնագանձված գումարի 5 տոկոսը որպես կատարողական գործողությունների կատարման ծախսեր:

Կատարողական վարույթի շրջանակներում պարտապանի գրանցման վայրի զննությամբ, պարտապանի գույքի և դրամական միջոցների նկատմամբ հայտարարված հետախուզման արդյունքում պարտապանին պատկանող բռնագանձման ենթակա գույք կամ դրամական միջոցներ չեն հայտնաբերվել:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել 19.11.2021թ.-ին հարուցված թիվ 08337264 կատարողական վարույթը 90-օրյա ժամկետով.

Առաջարկել պահանջատերերին և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան.

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում.

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետում:

Ավագ հարկադիր կատարող՝ Գ.Թովմասյան